ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ հայցը ենթակա է բավարարման, իսկ Հայցվորի կողմից նախապես վճարվել է հայցի քննության համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը, Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձման 215.160 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջին համարժեք նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ինչ վերաբերում է փաստաբանի խելամիտ վարձատրության գումարին, ապա Դատարանը նկատի ունենալով, որ հայցը ենթակա է բավարարման, բացի այդ, <<Փաստաբանական ծառայությունների վճարովի մատուցման մասին>> 05.02.2026թ. պայմանագրից հետևում է, որ պայմանագրի արժեքը կազմել է 360.000 ՀՀ դրամ, կարևորելով նաև քաղաքացիական գործի բարդության աստիճանը, ինչպես նաև ներկայացուցչի կատարած աշխատանքը, մասնավորապես հայցադիմումի պատրաստումը և այն կից փաստաթղթերով էլեկտրոնային համակարգով մուտքագրումը, հետագայում դիրքորոշում ներկայացնելը, Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձման 150.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

<<Բիլդպրո>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ Արմավիրի համայնքի՝ ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի անգործությունը վերացնելու, այն է՝ ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանին Հայցվորի կողմից 25.12.2025թ. ներկայացված Արմավիրի համայնքապետարանի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման թիվ ԱՔ-ԳՀԱՇՁԲ-25/23 գնման պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման թիվ 3 և 4 արձանագրությունները ստորագրելուն պարտավորեցնելու պահանջի մասին, բավարարել:

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանին պարտավորեցնել ստորագրել թիվ ԱՔ-ԳՀԱՇՁԲ-25/23 գնման պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման թիվ 3 և 4 արձանագրությունները:

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանից հօգուտ <<Բիլդպրո>> ՍՊԸ-ի բռնագանձել 215.160 ՀՀ դրամ՝ որպես բավարարված

հայցապահանջին համարժեք նախապես վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանից հօգուտ <<Բիլդպրո>> ՍՊԸ-ի բռնագանձել 150.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ՝

Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IED4-5C9B-478E-8BD5 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am